ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5, 7, 8, 37, 38, 45, 49 ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՒՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննության առարկա գործի շրջանակներում դիմող կողմը, «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով, 31.01.2014թ. միջնորդել է վեճի առարկա հոդվածների առնչությամբ կիրառել դիմումի ապահովման լրացուցիչ միջոց, մասնավորապես, կասեցնել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ, 8.1-րդ, 14-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների գործողությունը։

Սահմանադրական դատարանը, դիմող կողմի նախկին միջնորդության հիման վրա, 24.01.2014թ. ընդունել է ՍԴԱՈ-3 որոշումը, որի եզրափակիչ մասում նշված է՝ «Մինչև «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 և 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալե գործի դատաքննության ավարտը կասեցնել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի և 86-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը»։

Դիմող կողմը, 31.01.2014թ. ներկայացրած միջնորդության մեջ որպես իր առաջարկությունը հիմնավորող փաստարկ, ի թիվս այլնի, նշում է. «Չնայած նրան, որ պատասխանատվություն նախատեսող 76-րդ հոդվածը կասեցված է և օրենքով, գործատուների համար նախատեսված պարտադիր կուտակային վճարը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը չկատարելը չի առաջացնում պատասխանատվություն, սակայն թե գործատու հանդիսացող պետական կառավարման մարմիններն ու կազմակերպությունները և թե նաև պետական եկամուտների կոմիտեի ցուցումով (պահանջով) որոշ այլ գործատուները իրականացնում են աշխատակիցների վարձատրությունից պահումներ, փոխանցումներ և առանձին դեպքերում ստիպում են աշխատակիցներին ընտրելու կենսաթոշակային ֆոնդեր և կառավարիչներ։ Բազմաթիվ քաղաքացիներ և գործատուներ բողոքում են այս գործելակերպի դեմ, ակնկալում են հստակեցում՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով»։

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումի ապահովման միջոցի ընտրության հարցում բացառապես ղեկավարվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով, համաձայն որի՝ գործը քննության ընդունելուց հետո սահմանադրական դատարանը դիմող կողմի միջնորդությամբ կամ իր

նախաձեռնությամբ մինչև գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել այն իրավական ակտի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների դիմող կողմի կամ հանրության համար։

Դիմող կողմի բարձրացրած հարցերը դիմումի ապահովման միջոց ընտրելու շրջանակներում հանգամանալից քննության են առնվել ՀՀ սահմանադրական դատարանի 24.01.2014թ. ՍԴԱՈ-3 որոշման ընդունման շրջանակներում, և սահմանադրական դատարանն այդ որոշման վերանայման հիմքեր չի տեսնում։

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի գործողության հարցում ցանկացած շահագրգիռ պետական մարմին՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 24.01.2014թ. ՍԴԱՈ-3 որոշման մեջ ձևավորած իրավական դիրքորոշումը և դրա հիման վրա օրենքի՝ դիմումի ապահովման կասեցված իրավադրույթներին առնչվող այլ իրավահարաբերությունները պետք է դիտարկի բացառապես մարդու իրավունքի գերակայության սկզբունքի հարգման համատեքստում։ Այս առումով, պետական մարմինների՝ վիճարկվող օրինադրույթների կիրառմանն առնչվող որոշումների իրավաչափության գնահատումը պայմանավորված է նրանով, թե դրանք որքանով են համահունչ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջին՝ մինչև գործի դատաքննության ավարտը կանխելու համար հնարավոր անդառնալի կամ ծանր հետևանքները։

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45, 49 և 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալե գործով դիմումի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալե ՀՀ սահմանադրական դատարանի 24.01.2014թ. ՍԴԱՈ-3 որոշումը թողնել անփոփոխ։

2. Միջնորդության մեջ բարձրացված այլ հարցերին, որոնք վերաբերում են ներկա գործընթացների հետագա հնարավոր հետևանքներին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի և պետական կառավարման տարբեր մարմինների կողմից ՀՀ սահմանադրական դատարանի 24.01.2014թ. ՍԴԱՈ-3 որոշման կատարման վիճակին անդրադառնալ գործի դատաքննության շրջանակներում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 փետրվարի 2014 թվականի
ՍԴԱՈ-6